ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԽՆԿՈՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզ
Խնկոյան համայնք, փողոց 1 թիվ 19

☎ 093476682

«01» մարտի 2018թ.

N 57

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզպետ պարոն
Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն մարզպետ.

Ձեզ եմ ներկայացնում Խնկոյան համայնքի ավագանու 28.02.2018թ. N 10 որոշումը, N 11-Ն որոշումը իր հավելված N 1 և հավելված 2-ով և 12-Ն որոշումը իր հավելվածով:

Առդիր՝ 21 թերթ:

Հարգանքներով՝

Համայնքի ղեկավար Վ. Համբարձումյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Խնկոյան համայնք, հասցե գ. Խնկոյան 1 փողոց 19 շենք
հեռ. 093476682
էլ.Փոստ՝ khnkoyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<28>> Փետրվարի 2018 թվականի N 10

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, Խնկոյան համայնքի ավագանին **որոշում է՝**

1. Հաստատել Խնկոյան համայնքի ավագանու 2018 թվականի փետրվարի 28-ի արտահերթ նիստի օրակարգը.

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Խնկոյան համայնքի 2018 թվականի փետրվարի 28-ի արտահերթ նիստի

1. Խնկոյան համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան և զարգացման ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին.
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Խնկոյան համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էության, ծավալի, պայմանների և իրականացման մասին:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Ավագյան Վարդուհի Արամայիսի			
Հարությունյան Շիրակ Աղասու			
Ղազարյան Բագրատ Միշայի			
Մանուկյան Սնակ Վազգենի			

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Խնկոյան համայնքի ավագանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«28» փետրվարի 2018 թվականի թիվ 11-Ն

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Խնկոյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Խնկոյան համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելված N 1-ի:
2. Հաստատել 2017 թվականի Խնկոյան համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելված N 2-ի:
3. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
Ավագյան Վարդուհի Արամայիսի			
Հարությունյան Շիրակ Աղասու			
Ղազարյան Բագրատ Միշայի			
Մանուկյան Սևակ Վազգենի			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

4.8

Հավելված N 1

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(01.01.2017թ.-30.12.2017թ. ժամանակահատվածի համար)

1. Համայնքի անվանումը **Խնկոյան**
2. Փոստային հասցեն **Խնկոյան համայնք 1 փողոց 19 շենք /1813 կոդ/**
3. Համայնքի տեղաբաշխման մարզը և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման _____
4. Համայնքին սպասարկող Գանձապետական ստորաբաժանման անվանումը՝ ՀՀ **ֆին. գործառ. վարչ.**
5. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ (համայնքի բյուջե՝ 2)
6. Չափի միավորը՝ հազար դրամ

«28» փետրվարի 2018թ.

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
(ստորագրություն)

Կ.Տ.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(01.01.2017թ. - 30.12.2017թ. ժամանակահատվածի համար)

(հազար դրամով)

Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Տարեկան հաստատված պլան			Տարեկան ճշտված պլան			Փաստացի		
			Ընդամենը	այդ թվում		Ընդամենը	այդ թվում		Ընդամենը	այդ թվում	
			(u.5 + u.6)	վարչական մաս	Ֆոնդային մաս	(u.8+ u.9)	վարչական բյուջե	ֆոնդային բյուջե	(u.11+ u.12)	վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող100 + տող 1200+տող 1300)		8680.0	8680.0	0.0	8680.0	8680.0	0.0	8632.2	8632.2	0.0
1100	1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	7100	1652.2	1652.2	X	1652.2	1652.2	X	1743.4	1743.4	X
	այդ թվում՝										
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից	7131	1276.8	1276.8	X	1276.8	1276.8	X	1249.3	1249.3	X
1112	Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար		1276.8	1276.8	X	1276.8	1276.8	X	1249.3	1249.3	X
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից	7136	355.4	355.4	X	355.4	355.4	X	472.7	472.7	X
	այդ թվում՝										
1121	Գույքահարկ փոխադրամիջոցների համար		355.4	355.4	X	355.4	355.4	X	472.7	472.7	X
1130	1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	7145	20.0	20.0	X	20.0	20.0	X	21.4	21.4	X
	այդ թվում՝										
1131	Տեղական տուրքեր	71452	20.0	20.0	X	20.0	20.0	X	21.4	21.4	X
1136	գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների		0.0		X	0.0		X	1.5	1.5	X
1137	դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար		20.0	20.0	X	20.0	20.0	X	19.9	19.9	X
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	7300	6227.8	6227.8	0.0	6227.8	6227.8	0.0	6225.6	6225.6	0.0
1250	2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	7331	6227.8	6227.8	X	6227.8	6227.8	X	6225.6	6225.6	X
1251	ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող		6227.8	6227.8	X	6227.8	6227.8	X	6227.8	6227.8	X

1254	բ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ		0.0	0.0	X	0.0	0.0	X	-2.2	-2.2	X
1256	բբ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ		0.0		X	0.0		X	-2.2	-2.2	X
1300	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝	7400	800.0	800.0	0.0	800.0	800.0	0.0	663.2	663.2	0.0
1310	3.1 Տոկոսներ	7411	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
1320	3.2 Շահաբաժիններ	7412	0.0	0.0	X	0	0	X	0	0	X
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ	7415	800.0	800.0	X	800.0	800.0	X	663.2	663.2	X
	այդ թվում՝										
1331	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ		800.0	800.0	X	800.0	800.0	X	663.2	663.2	X
1340	3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայություններից	7421	0.0	0.0	X	0	0	X	0	0	X
1350	3.5 Վարչական գանձումներ	7422	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
	այդ թվում՝										
1351	Տեղական վճարներ		0.0		X	0.0		X	0.0		X
1360	3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից	7431	0.0	0.0	X	0	0	X	0	0	X
1370	3.7 Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	7441	0.0	0.0	X	0	0	X	0	0	X
1380	3.8 Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	7442	0.0	X	0.0	0	X	0	0	X	0
1390	3.9 Այլ եկամուտներ	7451	0.0	0.0	0.0	0	0	0	0	0	0
	այդ թվում՝										
1392	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր		0.0	X		0	X		0	X	
1393	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ		0.0			0			0		

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(գործառական դասակարգմամբ)

(01.01.2017թ. - 30.12.2017թ. ժամանակահատվածի համար)

(հազար դրամով)

					Տարեկան հաստատված պլան			Տարեկան ճշտված պլան			Փաստացի		
Տողի NN	Բա-ժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները	Ընդամենը (ս.7+ ս8)	այդ թվում		Ընդամենը (ս.10+ ս11)	այդ թվում		Ընդամենը (ս.13+ ս14)	այդ թվում	
						վարչական բյուջե	ֆոնդային բյուջե		վարչական բյուջե	ֆոնդային բյուջե		վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
2000	X	X	X	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	8712.5	8680.0	32.5	8712.5	8680.0	32.5	8639.3	8607.3	32.0
2100	01	0	0	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	7562.5	7530.0	32.5	7792.5	7660.0	32.5	7684.3	7652.3	32.0
				այդ թվում՝									
2110	01	1	0	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ	7547.5	7515.0	32.5	7777.5	7660.0	32.5	7669.3	7637.3	32.0
				որից՝									
2111	01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում	7547.5	7515.0	32.5	7777.5	7660.0	32.5	7669.3	7637.3	32.0
2130	01	3	0	*Ընդհանուր բնույթի ծառայություններ*	15.0	15.0	0.0	15.0	15.0	0.0	15.0	15.0	0.0
				որից՝									
2133	01	3	3	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	15.0	15.0		15.0	15.0		15.0	15.0	
2200	02	0	0	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող2210+2220+տող2230+տող2240+տող2250)	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
2300	03	0	0	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ և ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ (տող2310+տող2320+տող2330+տող2340+տող2350 +տող2360+տող2370)	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
2400	04	0	0	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող2410+տող2420+տող2430+տող2440+տող2450	270.0	270.0	0.0	480.0	480.0	0.0	480.0	480.0	0.0
				այդ թվում՝									
2450	04	5	0	*Տրանսպորտ*	270.0	270.0	0.0	480.0	480.0	0.0	480.0	480.0	0.0
				որից՝									
2451	04	5	1	Ճանապարհային տրանսպորտ	270.0	270.0	0.0	480.0	480.0	0.0	480.0	480.0	
2500	05	0	0	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ (տող2510+տող2520+տող2530+տող2540+տող2550 +տող2560)	100.0	100.0	0.0	100.0	100.0	0.0	100.0	100.0	0.0
				այդ թվում՝									
2520	05	2	0	*Կեղտաջրերի հեռացում*	100.0	100.0	0.0	100.0	100.0	0.0	100.0	100.0	0.0
				որից՝									
2521	05	2	1	Կեղտաջրերի հեռացում	100.0	100.0	0.0	100.0	100.0	0.0	100.0	100.0	

2600	06	0	0	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ (տող3610+տող3620+տող3630+տող3640+տող3650 +տող3660)	30.0	30.0	0.0	140.0	140.0	0.0	140.0	140.0	0.0
				այդ թվում՝									
2630	06	3	0	*Ջրամատակարարում*	30.0	30.0	0.0	80.0	80.0	0.0	80.0	80.0	0.0
				որից՝									
2631	06	3	1	Ջրամատակարարում	30.0	30.0	0.0	80.0	80.0	0.0	80.0	80.0	
2640	06	4	0	*Փողոցների լուսավորում*	0.0	0.0	0.0	60.0	60.0	0.0	60.0	60.0	0.0
2641	06	4	1	Փողոցների լուսավորում	0.0	0.0	0.0	60.0	60.0	0.0	60.0	60.0	
2700	07	0	0	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
2800	08	0	0	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող2810+տող2820+տող2830+տող2840+տող2850 +տող2860)	10.0	10.0	0.0	10.0	10.0	0.0	5.0	5.0	0.0
				այդ թվում՝									
2820	08	2	0	*Մշակութային ծառայություններ*	10.0	10.0	0.0	10.0	10.0	0.0	5.0	5.0	0.0
				որից՝									
2824	08	2	4	Այլ մշակութային կազմակերպություններ	10.0	10.0		10.0	10.0		5.0	5.0	
2900	09	0	0	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող2910+տող2920+տող2930+տող2940+տող2950 +տող2960+տող2970+տող2980)	50.0	50.0	0.0	35.0	35.0	0.0	0.0	0.0	0.0
				այդ թվում՝									
2920	09	2	0	*Միջնակարգ ընդհանուր կրթություն*	50.0	50.0	0.0	35.0	35.0	0.0	0.0	0.0	0.0
				որից՝									
2922	09	2	2	Միջնակարգ(լրիվ) ընդհանուր կրթություն	50.0	50.0		35.0	35.0		0.0		
3000	10	0	0	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	240.0	240.0	0.0	240.0	240.0	0.0	230.0	230.0	0.0
3030	10	3	0	*Հարազատին կորցրած անձինք*	0.0	0.0	0.0	40.0	40.0	0.0	40.0	40.0	0.0
3031	10	3	1	Հարազատին կորցրած անձինք	0.0	0.0		40.0	40.0		40.0	40.0	
3070	10	7	0	*Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)*	240.0	240.0	0.0	200.0	200.0	0.0	190.0	190.0	0.0
3071	10	7	1	Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	240.0	240.0		200.0	200.0		190.0	190.0	
3100	11	0	0	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍԿՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող3110)	450.0	450.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
				այդ թվում՝									
3110	11	1	0	*ՀՀ կառավարության և համայնքների*	450.0	450.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
				որից՝									
3112	11	1	2	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	450.0	450.0		0.0	0.0		0.0		

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(տնտեսագիտական դասակարգմամբ)

(01.01.2017թ. - 30.12.2017թ. ժամանակահատվածի համար)

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Տարեկան հաստատված պլան			Տարեկան ճշտված պլան			Փաստացի		
			Ընդամենը (u.5+u.6)	այդ թվում՝		Ընդամենը (u.8+u.9)	այդ թվում՝		Ընդամենը (u.11+u.12)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս		վարչական մաս	ֆոնդային մաս		վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
4000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող4050+տող5000+տող 6000)		8712.5	8680.0	32.5	8712.5	8680.0	32.5	8639.3	8607.3	32.0
	այդ թվում՝										
4050	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ (տող4100+տող4200+տող4300+տող4400+տող4500+ տող4600+տող4700)	x	8680.0	8680.0	0.0	8680.0	8680.0	0.0	8607.3	8607.3	0.0
	այդ թվում՝										
4100	1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ (տող4110+տող4120+տող4130)	x	6840.0	6840.0	x	6844.0	6844.0	x	6843.2	6843.2	x
	այդ թվում՝										
4110	*ԴՐԱՄԱԿ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱԿԱՐԶԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ* (տող4111+տող4112+ տող4114)	x	6840.0	6840.0	X	6844.0	6844.0	X	6843.2	6843.2	X
	որից՝										
4111	-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111	6840.0	6840.0	X	6844.0	6844.0	X	6843.2	6843.2	X
4200	1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ	x	1070.0	1070.0	X	1551.0	1551.0	X	1501.1	1501.1	X
	այդ թվում՝		0.0			0.0			0.0		
4210	*ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ*	x	80.0	80.0	X	66.0	66.0	X	53.0	53.0	X
	որից՝										
4212	-Էներգետիկ ծառայություններ	4212	80.0	80.0	X	66.0	66.0	X	53.0	53.0	X
4220	*ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ* (տող4221+տող4222+տող4223)	x	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
	որից՝										
4221	-Ներքին գործուղումներ	4221	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0		X
4230	*ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ*	x	40.0	40.0	X	40.0	40.0	X	42.1	42.1	X
	որից՝										
4232	-Համակարգչային ծառայություններ	4232	15.0	15.0	X	15.0	15.0	X	15.0	15.0	X
4234	-Տեղակատվական ծառայություններ	4234	25.0	25.0	X	28.0	28.0	X	27.1	27.1	X
4240	*ԱՅԼ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ* (տող 4241)	x	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X

4250	ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ (ծառայություններ և նյութեր) (տող4251+տող4252)	x	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4260	ՆՅՈՒԹԵՐ (տող4261+տող4262+տող4263+տող4264+տող4265+տող4266+տող4267+տող4268)	x	950.0	950.0	X	1445.0	1445.0	X	1406.0	1406.0	X
	որից՝										
4261	-Գրասենյակային նյութեր և հագուստ	4261	80.0	80.0	X	60.0	60.0	X	60.0	60.0	X
4264	-Տրանսպորտային նյութեր	4264	670.0	670.0	X	940.0	1245.0	X	1241.0	1241.0	X
4268	-Հատուկ նպատակային այլ նյութեր	4269	200.0	200.0	X	140.0	140.0	X	105.0	105.0	X
4300	1.3 ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐ (տող4310+տող4320+տող4330)	x	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4400	1.4 ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ (տող4410+տող4420)	x	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4500	1.5 ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող4510+տող4520+տող4530+տող4540)	x	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X
4600	1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ	x	240.0	240.0	X	240.0	240.0	X	230.0	230.0	X
	այդ թվում՝										
4630	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՍՏՆԵՐ (ԲՅՈՒՋԵԻՑ)	x	240.0	240.0	X	240.0	240.0	X	230.0	230.0	X
	որից՝										
4631	-Հուղարկավորության նպաստներ բյուջեից	4726	0.0	0.0	X	40.0	40.0	X	40.0	40.0	X
4632	-Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից	4727	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0		X
4633	-Բնակարանային նպաստներ բյուջեից	4728	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0		X
4634	-Այլ նպաստներ բյուջեից	4729	240.0	240.0	X	200.0	200.0	X	190.0	190.0	X
4700	1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ (տող4710+տող4720+տող4730+տող4740+տող4750+տող4760+տող4770)	x	530.0	530.0	0.0	42.0	42.0	0.0	33.0	33.0	0.0
	այդ թվում՝										
4710	ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՉ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ (ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (տող4711+տող4712)	x	10.0	10.0	X	10.0	10.0	X	5.0	5.0	X
	որից՝										
4712	-Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	4819	10.0	10.0	X	10.0	10.0	X	5.0	5.0	X
4720	ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ	x	70.0	70.0	X	32.0	32.0	X	28.0	28.0	X
	որից՝										
4723	-Պարտադիր վճարներ	4823	70.0	70.0	X	32.0	32.0	X	28.0	28.0	X
4770	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող4771)	x	450.0	450.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
	որից՝										
4771	-Պահուստային միջոցներ	4891	450.0	450.0		0.0	0.0		0.0		

4772	այդ թվում՝ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ	x	0.0	0.0		0.0	0.0		0.0	0.0	
5000	Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ (տող5100+տող5200+տող5300+տող5400)	x	32.5	X	32.5	32.5	X	32.5	32.0	X	32.0
	այդ թվում՝										
5100	1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող5110+տող5120+տող5130)	x	32.5	X	32.5	32.5	X	32.5	32.0	X	32.0
	այդ թվում՝										
5110	*ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ*	x	0.0	x	0.0	0.0	x	0.0	0.0	X	0.0
	որից՝										
5113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	
5120	*ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ* (տող5121+ տող5122+տող5123)	x	32.5	x	32.5	32.5	x	32.5	32.0	X	32.0
	որից՝										
5122	- Վարչական սարքավորումներ	5122	32.5	X	32.5	32.5	X	32.5	32.0	X	32.0
5130	*ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ* (տող 5131+տող 5132+տող 5133+ տող5134)	x	0.0	x	0.0	0.0	x	0.0	0.0	X	0.0
5200	*1.2 ՊԱՇԱՐՆԵՐ* (տող5211+տող5221+տող5231+տող5241)	x	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
5300	*1.3 ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐ* (տող 5311)	x	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
5400	*1.4 ՉԱՐՏԱՂՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐ* (տող 5411+տող 5421+տող 5431+տող5441)	x	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
6000	Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (տող6100+տող6200+տող6300+տող6400)	x	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
	այդ թվում՝										
6100	ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (տող6110+տող6120+տող6130)	x	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
	այդ թվում՝										
6110	*ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ*	8111	0.0	x	0.0	0.0	x	0.0	0.0	X	
6120	*ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ*	8121	0.0	x	0.0	0.0	x	0.0	0.0	X	
6130	*ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ*	8131	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	
6400	ՉԱՐՏԱՂՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ՝ (տող6410+տող6420+տող6430+տող6440)	x	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0
	այդ թվում՝										
6410	*ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ*	8411	0.0	X	0.0	0.0	X	0.0	0.0	X	0.0

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տողի NN		Տարեկան հաստատված պլան			Տարեկան ճշտված պլան			Փաստացի		
		Ընդամենը	այդ թվում		Ընդամենը	այդ թվում		Ընդամենը	այդ թվում	
		(u.4 + u5)	վարչական բյուջե	ֆոնդային բյուջե	(u.7 + u8)	վարչական բյուջե	ֆոնդային բյուջե	(u.10 + u11)	վարչական բյուջե	ֆոնդային բյուջե
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
8000	ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՎԵԼՈՒՐԴԸ ԿԱՄ ԴԵՖԻՑԻՏԸ (ՊԱԿԱՍՈՒՐԴԸ)	-32.5	0.0	-32.5	-32.5	0.0	-32.5	-25.4	-24.9	-0.5

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ԴԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները	NN	Տարեկան հաստատված պլան			Տարեկան ճշտված պլան			Փաստացի		
			Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝		Ընդամենը (ս.8+ս.9)	այդ թվում՝		Ընդամենը (ս.11+ս.12)	այդ թվում՝	
				վարչական մաս	ֆոնդային մաս		վարչական մաս	ֆոնդային մաս		վարչական մաս	ֆոնդային մաս
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
8010	ԸՆԴԱՄԵՆԸ՝ (տող 8100+տող 8200), (տող 8000 հակառակ նշանով)		32.5	0.0	32.5	32.5	0.0	32.5	25.4	24.9	0.5
	այդ թվում՝										
8100	Ա. ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (տող 8110+տող 8160)		32.5	0.0	32.5	32.5	0.0	32.5	25.4	24.9	0.5
	այդ թվում՝		0.0			0.0			0.0		
8110	*1. ՓՈԽՍՈՒՐ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 8111+տող 8120)*		0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
8160	*2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ (տող8161+տող8170+տող8190-տող8197+տող8198+տող8199)*		32.5	0.0	32.5	32.5	0.0	32.5	25.4	24.9	0.5
	այդ թվում՝										
8190	2.3. Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը՝ (տող 8191+տող 8194-տող 8193)		32.5	0.0	32.5	32.5	0.0	32.5	25.4	24.9	0.5
	այդ թվում՝		0.0			0.0			0.0		
8191	2.3.1. Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ	9320	32.0	32.0	X	32.0	32.0	X	24.9	24.9	X
	որից՝		0.0			0.0			0.0		
8192	*- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի վարչական մասից նախորդ տարում ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված՝առկա պարտավորությունների կատարմանը*		0.0		X	0.0		X	24.9	24.9	X
8193	*- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի ֆոնդային մաս (տող 8191 - տող 8192)*		-32.0	-32.0	X	-32.0	-32.0	X	0.0	0.0	X
8194	2.3.2. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի մնացորդ (տող 8195 + տող 8196)	9330	32.5	X	32.5	32.5	X	32.5	0.5	X	0.5
	որից՝										
8195	*- առանց վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարի*		0.5	X	0.5	0.5	X	0.5	0.5	X	0.5

8196	*- վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարը (տող 8193)*		32.0	X	32.0	32.0	X	32.0	0.0	X	0.0
8197	2.4. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցների տրամադրում վարչական մաս			X	X		X	X		X	X
8198	2.5. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի ժամանակավոր ազատ միջոցներից վարչական մաս տրամադրված միջոցների վերադարձ ֆոնդային մաս		0.0			0.0			0.0		
8199	2.6. Համայնքի բյուջեի հաշվում միջոցների մնացորդները հաշվետու ժամանակահատվածում (տող8010- տող 8110 - տող 8161 - տող 8170- տող 8190- տող 8197- տող 8198 - տող 8210)		0.0		0.0	0.0		0.0	0.0		0.0
8199	*որից՝ ծախսերի ֆինանսավորմանը չուղղված համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի գումարը*		0.0	X		0.0	X		0.0	X	
8200	Բ. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (տող 8210)		0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0

Օրինակելի ձև 2-2

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒՆ

ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՄԱՍԻՆ

01.01.2017թ -- 30.12.2017թ.. ժամանակահատվածի համար

1. Հիմնարկի անվանումը՝ ԽՆԿՈՅԱՆԻ գյուղապետարան
2. Փոստային հասցեն
3. Հիմնարկի տեղաբաշխման մարզի և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածքային դասակարգման
4. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի անվանում
5. Հիմնարկը սպասարկող գանձապետական ստորաբաժանման անվանումը՝
6. Հիմնարկի՝ գանձապետական ստորաբաժանումում հաշվառման համարը
7. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը՝ (ՀՀ պետական բյուջե՝ 1, համայնքի բյուջե՝ 2)

2

8. Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման
Բաժին N 1
Խումբ N 1
Դաս N 1
9. Ծրագրի անվանումը՝ կառավարման ապարատ
10. Ծրագրի կոդը 51
11. Պետական կառավարման վերադաս մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կոդը ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական դասակարգման
12. Չափի միավորը՝ հազար դրամ

Տողի NN	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման տարրերի անվանումները	NN	Տարեսկզբին հաստատված տարեկան նախահաշիվ	Փոփոխություններ տարեկան նախահաշվում: ՀՀ օրենք (համայնքի ավագանու որոշում)	ՀՀ կառավ. կողմից (համայնքի ղեկավարի որոշում)	Վերադասի կողմից	Տարեկան ճշտված նախահաշիվ	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Վճարման ենթակա, սակայն չիրականացված վճարումներ (պարտքեր): Ընդամենը	Որոնցից՝ 30 օրից անց պարտքեր	Դրամարկղի մնացորդ
Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը=Դ+Ե+Զ+Է	Թ	Ժ	ԺԱ	ԺԲ	ԺԳ	ԺԴ
1100000	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ,	x	7515.0				7660.0		7637.3	7637.3	0.0		
1110000	1.ՊԵՏԱԿԱՆ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ԴՐԱՆՑ ԵՆԹԱԿԱ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԸՆԴԱՄԵՆԸ, այդ թվում	x	6840.0				6844.0		6843.2	6843.2	0.0		
1110000	1.1 Աշխատանքի վարձատրություն	x	6840.0				6844.0		6843.2	6843.2	0.0		
1111000	-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	411100	6840.0				6844.0		6843.2	6843.2	0.0		
1120000	2 Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում	x	635.0				784.0		766.1	766.1	0.0		
1121000	*2.1 Շարունակական ծախսեր*		80.0				66.0		53.0	53.0	0.0		
1121200	-Էներգետիկ ծառայություններ	421200	80.0				66.0		53.0	53.0	0.0		
1122000	*2.2 Գործուղումների և շրջագայության ծախսեր*	x	0.0				0.0		0.0	0.0	0.0		
1123000	*2.3 Պայմանագրային այլ*	x	25.0				28.0		27.1	27.1	0.0		
1123400	-Տեղակատվական ծառայություններ	423400	25.0				28.0		27.1	27.1	0.0		
1124000	*2.4 Այլ մասնագիտական ծառայությունների ձեռք բերում*	x	0.0				0.0		0.0	0.0	0.0		
1125000	*2.5 Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)*	x	0.0				0.0		0.0	0.0	0.0		
1126000	*2.6 Նյութեր*	x	530.0				690.0		686.0	686.0	0.0		

1126100	-Գրասենյակային նյութեր և հագուստ	426100	80.0				60.0		60.0	60.0	0.0		
1126400	-Տրանսպորտային նյութեր	426400	400.0				585.0		581.0	581.0	0.0		
1126800	-Հատուկ նպատակային այլ նյութեր	426900	50.0				45.0		45.0	45.0	0.0		
1130000	*3 Տոկոսավճարներ*	x	0.0				0.0		0.0	0.0	0.0		
1140000	*4. Սուբսիդիաներ*	x	0.0				0.0		0.0	0.0	0.0		
1150000	*5. Դրամաշնորհներ*	x	0.0				0.0		0.0	0.0	0.0		
1160000	*6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ*	x	0.0				0.0		0.0	0.0	0.0		
1170000	*7. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ*	x	40.0				32.0		28.0	28.0	0.0		
1172000	*7.2 ՀԱՐԿԵՐ, ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԵՎ ՏՈՒՅԺԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԲԵՐ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՍՅԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ*	x	40.0				32.0		28.0	28.0	0.0		
1172300	-Պարտադիր վճարներ	482300	40.0				32.0		28.0	28.0	0.0		
1200000	Բ. ՈՉ-ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	x	32.5				32.5		32.0	32.0	0.0		
1210000	1.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	x	32.5				32.5		32.0	32.0	0.0		
1215000	-Վարչական սարքավորումներ	512200	32.5				32.5		32.0	32.0	0.0		
1220000	*2. ՊԱՇԱՐՆԵՐ*	x	0.0				0.0		0.0	0.0	0.0		
1230000	*3.ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐ*	x	0.0				0.0		0.0	0.0	0.0		
1240000	*4.ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐ*	x	0.0				0.0		0.0	0.0	0.0		
1000000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝	x	7547.5				7692.5		7669.3	7669.3	0.0		

«28» դեկտեմբերի 2018թ.

ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ _____ Վ. Համբարձումյան
(ստորագրություն)

ԳԼԽԱՎՈՐ
ՀԱՇՎԱՊԱՀ _____ Վ. Մանուկյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
Խնկոյան համայնքի
2018թ. փետրվարի 28-ի
թիվ 11-Ն որոշման

ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. 2017 թվականի ընթացքում համայնքի գլխավոր փողոցներում կատարվել է հարթեցման աշխատանքներ:

2. 2017 թվականի ընթացքում համայնքի գլխավոր փողոցներում կատարվել է ծյան մաքրման աշխատանքներ:

3. Բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման նպատակով ձեռք է բերվել շուրջ 13,7տ ազոտական պարարտանյութ, դիզ. վառելիք 1400 լ, կորնգանի սերմնացու 325 կգ, գարու սերմնացու 270 կգ դրանով նպաստելով գյուղատնտեսական մթերքների արտադրության ավելացմանը:

4. Մշտապես հոգ է տարվել ծայրահեղ աղքատ և խիստ կարիքավոր ընտանիքներին, 2017թ. ընթացքում համայնքի բյուջեից տրամադրվել է 10 հոգո սոցիալական օգնություն, որի ընդհանուր գումարը կազմել է 230.0 հազար դրամ:

5. Իրականացվել է «Ներքին ջուր» կոչվող գետակի մաքրում:

6. Իրականացվել է համայնքի գերեզմանատան տարածքի ցանկապատում:

7. Իրականացվել է ջրային գծերի վերանորոգում՝ 3 կմ:

8. Իրականացվել է գիշերային լույսերի՝ լապտերների վերանորոգում 10 հատ լապտեր է փոխվել:

ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Կ.Տ (ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«28» փետրվարի 2018 թվականի թիվ 12-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅԱՆ, ԾԱՎԱԼԻ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետով, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենքի 156-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշման III.-ի 8. կետով՝

Խնկոյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Խնկոյան համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման էության, ծավալի, պայմանների և իրականացման մասին կարգը՝ համաձայն հավելված-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
Ավագյան Վարդուհի Արամայիսի			
Հարությունյան Շիրակ Աղասու			
Ղազարյան Բագրատ Միշայի			
Մանուկյան Սևակ Վազգենի			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Կ.Տ (ստորագրություն) (անուն, ազգանուն)

Հավելված
Խնկոյան համայնքի ավագանու
2018թ. փետրվարի 28-ի թիվ 12-Ն որոշման

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԽՆԿՈՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿԱՄ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ՝ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԵՎ ԴՐԱՆ ՀԱՐԱԿԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԷՈՒԹՅԱՆ, ԾԱՎԱԼԻ, ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Սույն կարգով (այսուհետ՝ կարգ) սահմանվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Խնկոյան համայնքի (այսուհետ՝ համայնք) վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման էությունը, ծավալը և պայմանները (այսուհետ՝ պարտադիր բարեկարգում):

2. Պարտադիր բարեկարգումը՝ միջոցառումների համալիր է, որն ուղղված է համայնքի սանիտարական վիճակի և գեղագիտական տեսքի պահպանմանն ու բարելավմանը, բնակչության բնակվելու պայմանների հարմարավետության բարձրացմանը, ինչպես նաև համայնքի ճարտարապետական տեսքի պահպանմանը, որոնք իրականացվում են անշարժ գույքի պարտադիր ընթացիկ նորոգման, ընդհանուր օգտագործման տարածքների պարբերաբար մաքրման և բարեկարգման միջոցով:

3. Պարտադիր բարեկարգման օբյեկտներն են՝ շենքերը, շինությունները և այլ կառույցները, ինչպես նաև անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման հողամասերն ու տարածքները:

4. Սույն կարգը տարածվում է համայնքի վարչական տարածքում գտնվող՝

1) անհատական բնակելի տների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

2) առանձին տեղակայված հասարակական, արտադրական և այլ ոչ բնակելի նշանակության շենքերի, շինությունների և կառույցների (այսուհետ՝ օբյեկտներ) սեփականատերերի կամ տիրապետողների վրա,

5. Պարտադիր բարեկարգման աշխատանքներն են՝

1) անշարժ գույքի արտաքին մասի պատշաճ պահպանման (նաև լվացման) և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարբերաբար բարեկարգումը և մաքրումը, մաքրության պահպանումը,

2) կանաչապատման համար նախատեսված տարածքների, սիզամարգերի, բուսածածկերի կանաչապատումը և դրանց անհրաժեշտ խնամքն ու պահպանումը,

3) շենքերի և շինությունների հարակից բակային տարածքների պարբերաբար բարեկարգումը և մաքրումը,

4) թեթև կոնստրուկցիաներով (մետաղյա խողովակ, ցանց, ճաղեր և այլն) ցանկապատում և դրանց փոխում, փոխարինում,

5) անշարժ գույքի մուտքի լուսավորության ապահովումը,

6) համայնքային նշանակության փողոցներում գտնվող առևտրային նշանակության օբյեկտների տոնական զարդարումը՝ Ամանորի և Սուրբ Ծննդյան տոներին՝ յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 25-ից մինչև հաջորդ տարվա հունվարի 13-ը ներառյալ:

6. Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը և փոխարինումը:

7. Պարտադիր բարեկարգման աշխատանքների համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշմանը համապատասխան՝ շինարարության թույլտվություն չի պահանջվում:

8. Քաղաքաշինական օրենսդրությամբ նախատեսված կարգով և միայն համաձայնեցված նախագծի և շինարարության թույլտվության առկայությամբ կարող են իրականացվել հետևյալ աշխատանքները.

1) շենքի ճակատի նոր ճարտարապետական տարրեր, դրանց փոխարինում կամ վերացում,

2) տանիքի ձևի, ծածկույթի նյութի և գույնի փոփոխում,

3) լոջիաների ապակեպատում կամ ներքին մակերևույթների գույնի փոփոխություններ,

4) պատշգամբների բազրիքաճաղերի նկարվածքի և գույնի փոփոխություններ,

5) բնական քարե շարվածքով իրականացված շենքերի ճակատների նյութի, ֆակտուրայի փոփոխություն և ներկում, ինչպես նաև նոր բացվածքների բացում կամ գոյություն ունեցողների փակում:

9. Գործող ընթացակարգերով սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող աշխատանքներն իրականացվում են համայնքի ղեկավարի կամ նրա լիազորած անձի կողմից համաձայնեցված ձևավորման նախագծին և (կամ) հատակագիծ - սխեմային համապատասխան: Նախագիծը անվճար մշակվում և տրվում է Խնկոյանի համայնքապետարանի (այսուհետ՝ համայնքապետարանի) համապատասխան ստորաբաժանման (մասնագետի) կողմից:

10. Պատմության և մշակույթի հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված շենքերի և կառույցների ճակատների վերակառուցումը և վերանորոգումը իրականացվում է հուշարձանների պահպանության պետական լիազոր մարմնի համաձայնությամբ: Պետական լիազոր մարմնի կարող են տրվել նորոգման կամ վերակառուցման լուծումների վերաբերյալ հանձնարարականներ, որոնք ներառվում են համայնքապետարանի կողմից տրվող ձևավորման նախագծում կամ ճարտարապետահատակագծային առաջադրանքում:

11.Համայնքապետարանի համապատասխան ստորաբաժանման (մասնագետի, վարչական ղեկավարի բազմաբնակավայր համայնքում) կողմից կարգի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման ընթացքում շենքի կամ շինության սեփականատիրոջը կամ տիրապետողին կարող են տրվել ցուցումներ շենքի, շինության

ճակատների, օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքների բարեկարգման և կատարվող այլ աշխատանքների իրականացման վերաբերյալ, հիմնավորելով դրանց անհրաժեշտությունը և նշելով ժամկետները:

12. Պարտադիր բարեկարգման պահանջներն են՝

1) խանութների, հասարակական սննդի, կենցաղսպասարկման և այլ նմանատիպ օբյեկտների ցուցափեղկերը և գովազդային վահանակները պետք է սարքավորված և ձևավորված լինեն պատշաճ ձևով, չխաթարեն միջավայրը և չխանգարեն հետիոտն և ավտոմոբիլային երթևեկությանը,

2) մայթերի բարեկարգման դեպքում պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

ա. ապահովված լինի տեսանելի մաքրությունը (փոշուց, աղբից, տերևներից և այլն) և անհրաժեշտ քանակով աղբամանների առկայությունը, մաքրման աշխատանքները պետք է կատարվեն առավոտյան ժամը 08:00-ից մինչև 09:00-ն և երեկոյան ժամը 18:00-ից մինչև 19:00-ն,

բ. ձմռանը պետք է իրականացվի տեղացած ձյան ամենօրյա մաքրումը՝ տեղումները դադարելուց 4 ժամ հետո կամ մինչև առավոտյան ժամը 11:00-ն, եթե ձյունը դադարել է նախորդ երեկո ժամը 21:00-ին և դրանից հետո,

գ. ձյան տեղումների ընդհատման ընթացքում մայթերի ասֆալտ-բետոնե ծածկերը և (կամ) սալիկապատված հատվածները պետք է ամբողջությամբ մաքրվեն ձյան և սառույցի կուտակումներից,

դ. ձյան մաքրման ընթացքում արգելվում է ձյան և սառույցի կույտերը կուտակել երթևեկելի մասում: Թույլատրվում է միայն ժամանակավորապես կույտերը տեղավորել հասարակական տրանսպորտի կանգառների հետնամասում, սիզամարգերում կամ ճամփեզրին,

ե. ճանապարհների, փողոցների եզրաքարերը պետք է ամբողջությամբ մաքրված լինեն ձյունից և սառույցից:

13. Համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգումը իրականացնում է անշարժ գույքի սեփականատեր և (կամ) տիրապետող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

14. Կանաչապատման աշխատանքները ենթակա են պարտադիր կատարման միայն համայնքապետարանի կողմից տրված ֆիտոնախագծի համաձայն:

15. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը անշարժ գույքի արտաքին ճարտարապետական ցանկացած փոփոխություն,այդ թվում արտաքին գովազդի տեղադրումը համաձայնեցնում է համայնքի ղեկավարի հետ:

16. Անշարժ գույքի սեփականատերը կամ տիրապետողը, սույն կարգի համապատասխան՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքների պարտադիր բարեկարգման աշխատանքներն իրականացնում է ինքնուրույն կամ իր հաշվին՝ մասնագիտացված կազմակերպությունների ներգրավման միջոցով:

17. Այն դեպքում, երբ անշարժ գույքի սեփականատեր կամ տիրապետող են հանդիսանում մի քանի անձ, ապա նրանցից յուրաքանչյուրի մասնակցությունը պարտադիր բարեկարգման աշխատանքներին որոշվում է սեփականության կամ տիրապետման իրավունքում նրանց մասնակցության բաժնին համամասնորեն:

18. Այն դեպքում, երբ հատկացված հողամասի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքները, ինչպես նաև շենքի, շինության կամ դրանց տարածքի սեփականության կամ օգտագործման կամ այլ գույքային իրավունքները չեն ենթարկվել պետական գրանցման, ապա պարտադիր բարեկարգման և մաքրման է ենթակա այն տարածքը, որը փաստացի տիրապետվում է անշարժ գույքի տիրապետողի կողմից:

19. Անշարժ գույքին հարակից ընդհանուր օգտագործման տարածքների պարտադիր բարեկարգման աշխատանքների ծավալը որոշվում է՝

1) կրպակների, տաղավարների կամ մանրածախ առևտուր իրականացնող այլ օբյեկտների, հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների, կենցաղային և այլ սպասարկման օբյեկտների, ավտոտնակների համար՝ հատկացված կամ զբաղեցրած տարածքի պարագծից մինչև 5 մետր, կառույցից դուրս՝ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

2) առանձնատների համար՝ դրանց զբաղեցրած հողամասի պարագծով՝ մինչև 5 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

3) առողջապահական և կրթական օբյեկտների համար՝ ամբողջ տարածքի պարագծից մինչև 10 մետր, կամ մինչև փողոցի երթևեկելի մասի եզրաքարը,

4) առանձին դեպքերում կարող են կիրառվել սույն կետի 1-6-րդ ենթակետերում նշված ծավալներից տարբերվող ծավալներ՝ համայնքապետարանի համաձայնությամբ:

20. Սույն կարգով նախատեսված դրույթների խախտումն առաջացնում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 156-րդ հոդվածով նախատեսված տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի **տասնապատիկի չափով**:

21. Մինչև վարչական տուգանքի նշանակումը համայնքի ղեկավարը անշարժ գույքի սեփականատիրոջը կամ տիրապետողին տալիս է ծանուցագիր – զգուշացնում նրա տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի բարեկարգման մասին՝ նշելով իրականացվելիք բարեկարգման աշխատանքները և ժամկետը, որը չի կարող գերազանցել **30 օրը**:

22. Անշարժ գույքի սեփականատիրոջը կամ տիրապետողին բարեկարգման աշխատանքները կատարելու համար տրված ժամկետի ավարտից հետո, եթե այդ աշխատանքները չեն իրականացվել համայնքի ղեկավարի կողմից տուգանքի նշանակումը պարտադիր է:

23. Բարեկարգման աշխատանքները չկատարելու համար նշանակված և գանձված վարչական տուգանքներից առաջացած գումարները համայնքի ղեկավարը օգտագործում է միայն համայնքում բարեկարգման աշխատանքներ իրականացնելու համար:

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Բաբայան